Հաստատում եմ

Տնօրեն ____________

«____» ________ 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուստարի

Պ. Սևակի անվան հ.123 հիմն. դպրոց

դասարան

**ԴԱՍՂԵԿ՝ Գ. Եղիազարյան**

**2023 – 2024 ՈՒՍ.ՏԱՐԻ**

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Ուսումնադաստիարակչական նախատեսված աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում.

- Կահավորել և ձևավորել դասասենյակը:
- Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը:
- Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
- Դասարանում սահմանել հերթապահություն:
- Ընտրել ակտիվի կազմը:
- Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման ուղղությամբ և հասնել գիտակցական կարգապահության:
- Զարգացնել աշակերտների մոտ հաղորդակցման և համագործակցության կարողություններ և հմտություններ:
- Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և ապահովել մասնակցությունը հեռավար դասերին:
- Ապահովել դասղեկ-ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը:
- Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ,կապ պահպանել գրադարանի հետ:
- Զարգացնել ինտելեկտուալ հմտությունները:
- Ուշադրություն դարձնել աշխատանքային դաստիարակությանը:
- Ուշադրություն դարձնել քաղաքացիական դաստիարակությանը:
- Նպաստել աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը:
- Ամեն կերպ օգնել և աջակցել ետ մնացող աշակերտներին:
- Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:
- Ստեղծել և ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:
- Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակայող աշակերտների հետ:

- *Ուշադրություն դարձնել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին: Համավարակի ընթացքում պահպանել հակահամաճարակային կանոնները՝ կրել դիմակ, ախտահանել ձեռքերը, դասասենյակը, բռնակները,…*
- *Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:*
- *Կազմակերպել դաստիարակչական, ճանաչողական էքսկուրսիաներ:*

# *ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

*<u>ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> _ Աշխատել, որ աշակերտները սիրեն իրենց մայրենի լեզուն, հողը, մշակույթը, կրոնը, ավանդույթները: Հեռավար դասերի ընթացքում և առհասարակ հորդորել գրել հայատառ: Այցելել գրողների տուն-թանգարաններ, ծանոթանալ հուշարձաններին, նրանց կերտման պատմությանը:*

*<u>ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Սովորեցնել Աստծո 10 պատվիրանները և ուղղություններ տալ ՝ կյանքում դրանք ճիշտ կիրառելու: Իմանան քրիստոնեական կրոնի մասին և զերծ մնալ կրոնական զանազան շեղումներից:*

*<u>ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել: Զնավորել գեղագիտական ճաշակ:*

*<u>ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u>-Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով, սեր արթնացնել դեպի հայրենիքը, ծանոթացնել մեր հերոսներին, կազմակերպել էքսկուրսիա դեպի Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, «Հաղթանակ» զբոսայգի, Խոր Վիրապ:*

*<u>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Զրույց՝ «Առողջ մարմնում առողջ հոգի» թեմայով : Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին, համադպրոցական և միջդասարանային սպորտային միջոցառումներին:*

***ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ****–Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը: Կարևորել աշխատանքը՝ որպես բարոյական դաստիարակության միջոց:Զրուցել տարբեր աշխատանքների և մասնագիտությունների մասին,ընդգծել աշխատանքի դերն ու նշանակությունը մարդու կյանքում:*

***ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*** *– Մաքուր պահել շրջակա միջավայրը: Գարնանը մասնակցել շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես սիրում եմ բնությունը» թեմայով:*

***ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ*** *– Ապահովել դպրոց - ընտանիք կապը՝ օրագրի միջոցով: Շաբաթվա վերջում ստուգել օրագրերը և նշումներ կատարել: Կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների հանդիպումներ: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ: Կազմակերպել անհատական հանդիպումներ ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում՝նաև երեխայի մասնակցությամբ:*

*Համավարակի առկայության դեպքում բոլոր տեսակի հանդիպումները կազմակերպել առցանց:*

## *ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ*

## *ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿԶԲԻՆ*

- Կազմել աշակերտների ցուցակը և ժամանակավոր դասամատյանը:
- Կազմակերպել դասագրքերի ստացումը գրադարանից և բաշխումը աշակերտներին՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները:
- Կազմել դասասենյակը մաքրելու հերթապահության գրաֆիկ:
- Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն:
- Աշակերտների հետ համատեղ ընտրել տարվա ընթացքում քննարկվե լիք թեման և դասղեկի ժամերի զրույցների թեմատիկան:
- Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները, պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
- Ընտրել դասարանի ակտիվ՝ավագ, օգնականներ:
- Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչ կրթության հաստատություններում, խմբակներում աշակերտների մասնակցության մասին:
- Ճշտել՝գրանցվե՞լ են արդյո՞ք բոլորը «էլեկտրոնային օրագրում»:
- Ցուցաբերել մանկավարժական աջակցություն աշակերտների ինքնավարության դասարանական մարմնին (ակտիվին):
- Ընտրել ծնողկոմիտեի անդամներ և նախագահ:
- Հաշվառել «Փարոս» ծրագրում ընդգրկված ընտանիքների երեխաներին:
- Պարզել՝արդյո՞ք բոլորն ունեն հնարավորություն՝անհրաժեշտության դեպքում հեռավար դասընթացներին մասնակցելու համար:

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Դասասենյակի ախտահանում, օդափոխում, հակահամաճարակային կանոնների պահպանում:
- Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:

- Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
- Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին՝ բուֆետում և ճաշարանում:
- Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի, ստուգել, դասագրքերի և տետրե ի առկայությունը ըստ դասացուցակի:
- Հետևել, որ բջջային հեռախոսները անջատած պահեն մինչև դասերի ավարտը:
- Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին չբղավեն, չվազեն և չհրմշտեն իրար: Աշխատել կանխել ուշացումներն ու անհարգ ի բացակայությունները:
- Պարզել օրվա բացակա աշակերտների բացակայությունների պատճառը:





# ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Էլեկտրոնային մատյանի վարման վերահսկողություն:
- Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:
- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:
- Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ:

## ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ՝ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
- Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատականների մասին, հորդորել, որ օգտվեն էլեկրոնային օրագրերից:
- Կատարել դասալսումներ:
- Լսել դասարանի ավագի հաշվետվությունը, կատարել դաստիարակչա-կան աշխատանքների վերլուծություն:
- Հանդիպել ծնողների հետ:
- Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:
- Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:

## ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Պահել ծնող - ուսուցիչ կապը:
- Հետևել դասագրքերի պահպանմանը:
- Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապ-
- Անցկացնել ծնողական ժողովներ և պլանավորված զրույցներ:
- Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձ-րացման նպատակով:

հեպքում հետևել, որ բոլորը մասնակցեն դասերին:

- Կազմակերպել էքսկուրսիաներ՝ ՀՀ պատմա-մշակութային օջախներ
- Անցկացնել դաստիարակչական թեստեր և կազմակերպել բանավեճեր աշակերտներին հուզող թեմաներով:
- Աշխատանք տանել, որ աշակերտները մասնակցեն արտադասարանական միջոցառումներին:
- Ունենալ աշակերտների արտադպրոցական պարապմունքների մասնակցության մասին տեղեկություններ:
- Ընտրել ծնողական ժողովների թեմատիկան:
- Վերահսկել աշակերտների հաճախումները, կանխել ուշացումները:
- Էլ.մատյանի, աշակերտական օրագրերի և այլ փաստաթղթերի վարման կազմակերպում:
- Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների (աշակերտների միջև,աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական) կարգավորում, համակարգում, վերլուծություն:

- Կիսամյակի ամփոփում:
- Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- Ծնողական ժողով:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:
- Ծնողական ժողով (ծնողներին ներկայացնել տարեվերջյան արդյունքները):
- Տարեկան հաշվետվության հանձնում:

- Դասասենյակի մաքրում և հանձնում:
- Երեխաների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառա-յին հանգստի կազմակերպման մասին:
- Աշակերտական ակտիվի, ծնողների հետ կազմակերպել դասարա-նի ամառային էքսկուրսիան:
- Լրացնել աշակերտների անձնական գործերը:

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Ծննդյան օրը | Հասցեն | Հեռախոսի համարը |
|---|---|---|---|---|

# ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



## ԴԱՍԱՐԱՆԻ ԱԿՏԻՎԻ ԿԱԶՄԸ

***Դասարանի ավագ՝*** *Պողոսյան Սոնա*

***Օգնական՝*** *1. Ղարաջյան Հայկ*

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1. *Պետրոսյան Անահիտ*
2. *Եղյան Մարիամ*

Սոցիալապես անապահով ընտանիքի երեխա՝

1.Եղիկյան Էլեն
2. Հայրապետյան Մերի

Միակողմանի (երկկողմանի)
ծնողազուրկ աշակերտներ՝

Հակոբյան Միեր

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք
ունեցող աշակերտներ՝

Դժվար դաստիարակվող և վարքի շեղում ունեցող
աշակերտներ՝

1. Ծնողներին մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքներին:
2. Ապահովել ուսուցիչ-ծնող-աշակերտ կապը:
3. Անցկացնել ծնողական ժողովներ, անհատական զրույցներ:

# Ծնողկոմիտեի կազմը

**Նախագահ՝** Ներսիսյան Վարդուհի
**Անդամներ՝** Գուլոյան Հասմիկ
Մանուկյան Լալա

# Ծնողական ժողովներ՝

1. 01.09. – 07. 09. 2023 թ. Կազմակերպչական հարցեր
2. 01.10. – 07.10.2022 թ. Աշակերտների հաճախումների, ուշացումների, արտաքին տեսքի մասին: Լսել դասավանդող ուսուցիչներին,ներկայացնել ընթացիկ գնահատականները:
3. 10.01. – 14.01.2024 թ. Կիսամյակի ամփոփում
4. 21.03. – 25.03.2024 թ. Աշակերտների հաճախումների, ուշացումների, արտաքին տեսքի մասին: Լսել դասավանդող ուսուցիչներին, ներկայացնել ընթացիկ գնահատականները:
5. 30.05. – 03.06.2024 թ. Կիսամյակի ամփոփում

## Զրույցներ ծնողների հետ

1. Կարգապահական հարցեր :

3. «Թրաֆիքինգի մասին», «Համակարգչի դերը երեխայի հետաքրքրություն-
ների ձևավորման գործում, օգուտներն ու վնասները»



## ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

2023-2024 ուսումնական տարի

- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ - Եղիազարյան Գայանե
- ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - Եղիազարյան Գայանե
- ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ - Մատնիշյան Նարինե
- ԱՆԳԼԵՐԵՆ -Գրիգորյան Լիլիթ
- ՀԱՆՐԱՀԱՇԻՎ - Մարգարյան Արեգնազ
- ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ - Մարգարյան Արեգնազ
- ՖԻԶԻԿԱ -Համբարձումյան Գոհար
- ՔԻՄԻԱ - Սուքիասյան Հասմիկ
- ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ -Խաչատրյան Արաքսի
- ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ -Եկմալյան Լիլիթ
- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ -Եկմալյանյան Լիլիթ
- ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ - Չախմախչյան Հասմիկ
- ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ -Ազատյան Միրանուշ
- ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ -Կոստանյան Թամարա

- ՀԱՄԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -Ասիկյան Նարինե
- ՆԶՊ -Յայլոյան Հովհաննես

## 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԴԱՍԱԳՐՔԵՐ

### 2023-2024 ուս.տարի

- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
- ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ
- ԱՆԳԼԵՐԵՆ
- ՀԱՆՐԱՀԱՇԻՎ
- ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ
- ՖԻԶԻԿԱ
- ՔԻՄԻԱ
- ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ
- ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
- ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՆԶՊ

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ
# 2023 – 2024

| N | Թեմա | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Կատարման մասին | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գիտելիքի և դպրության օր:Գիտե-Գիտելիքի և դպրության օր: Գիտելիքի դերը մարդու կյանքում: | Դասղեկ, աշակերտներ | 08.09.2023թ. | | |
| 2. | Անձնական հիգիենայի կանոններ: | Դասղեկ Բուժքույր | 14.09 | | |
| 3. | Անկախության դերը: Զինանշանի, դրոշի և օրհներգի ստեղծման պատմությունները: | Դասղեկ Աշակերտներ | 28.09 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **5.** | *Մեր հերոս շրջանավարտները:* | **Դասղեկ** | **12.10** | | |
| **6.** | ***Հանդուրժողականություն:*** | **Դասղեկ Աշակերտներ** | **19.10** | | |
| **7.** | *Գեղագիտական դաստիարակություն* | **Դասղեկ Աշակերտներ** | **02.11** | | |
| **8.** | *Աշխատանքային դաստիարակություն* | **Դասղեկ Աշակերտներ** | **09.11** | | |
| **9.** | *Վարվեցողության կանոններ:* | **Աշակերտներ** | **16.11** | | |
| **10.** | *Ժպիտը մարդու կյանքում: Նոյեմբերի 21-ը բարևի միջազգային օրն է:* | **Դասղեկ Աշակերտներ** | **23.11** | | |
| **11.** | ***Թրաֆիքինգ:*** *Թրաֆիկինգի դեմ պայքարի միջոցառումներ:* | **Դասղեկ Աշակերտներ** | **30.11** | | |
| **12.** | ***Թրաֆիքինգ:*** *Ինչպես խուսա- փել զոհ դառնալուց:* | **Դասղեկ Աշակերտներ** | **29.11** | | |
| **13.** | *Բնական աղետներ:* | **Դասղեկ Աշակերտներ** | **07.12** | | |
| **14.** | *Ո՞ւմ կուզենայի նմանվել:* | **Աշակերտներ** | **14.12** | | |
| **15.** | *Ամանորը աշխարհի տարբեր կողմերում: Դարձիր Ձմեռ պապ ընկերոջդ համար. «Գաղտնի Սանտա»:* | **Աշակերտներ** | **21.12** | | |
| **16.** | *Մենք հյուր ենք գնացել, մեզ մոտ հյուրեր կան:* | **Դասղեկ Աշակերտներ** | **2024 թ. 11.01** | | |
| **17.** | *Ֆիզիկական դաստիարակության դերը* | **Դասղեկ Աշակերտներ** | **18.01** | | |
| **18.** | *Հայկական բանակը, նրա դերն ու նշանակությունը: Մերօրյա հերոսներ:* | **Դասղեկ Աշակերտներ** | **25.01** | | |
| **19.** | *Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն* | **Դասղեկ Աշակերտներ** | **01.02** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20. | ծիսակատարություններ: Տյառն ընդ առաջի և Սուրբ Սարգսի տոները | Դասղեկ Աշակերտներ | 08.02 | | |
| 21. | Հայ մանկագիրներ: Անաղարտ պահենք մեր մայրենին: Նվիրի՛ր գիրք: | Դասղեկ Աշակերտներ | 15.02 | | |
| 22. | **Ճանապարհային երթևեկության կանոնները:** | Դասղեկ Աշակերտներ | 22.02 | | |
| 23. | Ընտանիքի դերը մարդու կյանքում | Դասղեկ Աշակերտներ | 29.02 | | |
| 24. | Մայր իմ անուշ ու անգին: | Աշակերտներ | 07.03 | | |
| 25. | Ինչպես եմ անցկացնում ազատ ժամանակս: | Աշակերտներ | 14.03 | | |
| 26. | **Հոգևոր դաստիարակության դեր.** | Դասղեկ Աշակերտներ | 21.03 | | |
| 27. | Զատկի տոնի խորհուրդը: | Դասղեկ Աշակերտներ | 04.04 | | |
| 28. | Ոսկի կանոններ | Դասղեկ Աշակերտներ | 11.04 | | |
| 29. | Մեծ եղեռն: Այցելություն ծիծեռնակաբերդ: | Դասղեկ Աշակերտներ | 18.04 | | |
| 30. | Քո հնարավորությունները, մա՛րդ | Աշակերտներ | 25. 04 | | |
| 31. | Մեր երկրի հերոսական անցյալը: | Դասղեկ Աշակերտներ | 02.05 | | |
| 32. | Իմ տունը: Իմ ընտանիքը: Մայիսի 15-ը ընտանիքի միջազգային օրն է: | Դասղեկ Աշակերտներ | 16.05 | | |
| 34. | Ինչո՞ւ եմ սիրում իմ դպրոցը: | Աշակերտներ | 23.05 | | |

# *ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ*

# *ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ*

*Այցելություններ թանգարաններ, պատմամշակութային օջախներ,…*